

ՀՀՈՑ ՓԲԸ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՇԵՆՔԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ՆԱԽԱԳԾՍ-ՆԱԽԱՀԱՇՎԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՄՇԱԿՄԱՆ, ԾԱԽՄԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՏՈՒՑՄԱՆ

ք.Երևան

17 Դեկտեմբեր 2019 թ.

«Հայաստանի հեռուստատեսային և ռադիոհաղորդիչ ցանց» ՓԲ ընկերությունը, ի դեմս գլխավոր տնօրեն Ս. Միլիտոնյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Օրիոն 7» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Ն. Սարգսյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, հիշատակման դեպքում Կողմեր, կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր) հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է շենքի վերանորոգման նախագծա-նախահաշվային փաստաթղթերի մշակման, ծախսերի գնահատման ծառայության մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ Ծառայություն)՝ համաձայն Պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող Ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը:

2.1.2 Եթե մատուցվել է Պայմանագրի Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող Ծառայություն.

ա) Չընդունել Ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի Ծառայությունը Պայմանագրին համապատասխանող Ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու Պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը:

բ) Հրաժարվել Պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու Ծառայության համար վճարված գումարը և Պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը:

2.1.3 Միակողմանի լուծել Պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է Պայմանագիրը: Կատարողի կողմից Պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե Ծառայությունը չի համապատասխանում Պայմանագրի Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով սահմանված պահանջներին:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխանող Ծառայության արդյունքը, իսկ Ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև Պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից Պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում՝ նաև Պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով սահմանված պայմաններով ապահովել Ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով և Պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է Պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում Պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել Պայմանագիրը այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի Պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ Պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև Պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու Պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև Պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային Պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում Պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով Պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա Պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են՝ գնվող Օառայության ծավալների կամ ձևի փոփոխության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Օառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ Պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել Պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, Պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների

պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, Պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.10 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Պայմանագիրը կազմված է 9 /ինը/ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են Պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է Պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

7.13 Պայմանագրով նախատեսված Ծառայության մատուցումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ ՈՒ

ՀՀ, ք. Երևան, Նորք, Հովսեփյան 95

Ամերիաբանկ ՓԲԸ

h/h 1570027609970100

ՀՎՀՀ 01501898

/ստորագրություն/
Կ.Տ



Կ Ա Տ Ա Ր Ո Ղ

ք. Երևան, Մամիկոնյանց 27, բն. 126

Ակրա-Կրեդիտ-ագրիկոլ բանկ ՓԲԸ

h/h 220453330684000

ՀՎՀՀ 00147538

/ստորագրություն/
Կ.Տ



Սանիտարական հանգուցյան երեսապատում հավանապարզ, գուգարանակրկները և լվացարանների տեղադրում
կրտարական հատվածում կախովի առաստաղների իրականացում (Յ=10-12 մմ) ջրակայուն գիպաստովկարաթթ սակերով
Սանիտարական հանգուցյան կախովի առաստաղների իրականացում պլաստաման շերտապլոֆիներով
Անբող կառուցի արտաքին մետաղյա դռների, դարբանների, շերտափեղկերի և տարիանման աստիճանների տեղիում
Նախատեսել ենթին ջրամատակարարման, կոյուղու, ջրուցման, կապի, էլեկտրապահպանության («ԼԵԴ») տիպի էներգավանայր լամպեր) և հակահողեհային ազդանշանման
համակարգեր

H=308 մ հեռուստաաշտարակի երկաթետուն հիմքերի բազպտե սալիկների փոխարինում
Բաց պատշգամբի մետաղական կոնստրուկցիաների տեղիում
Պատշգամբի տանիքի իրականացում 0.5 մ գունակոր պրոֆիլակորված մետաղական տանիքային պողպատով
Պատշգամբի պատերի երեսապատում գունակոր պլոստիկ թիթերներով
Շին աղբի մաքրում, հավաքում, բարձում պկտիկնքնաթափի և տեղափոխում թափոնատեր:

Նախագծի կազմը. չափագրման մանրամասն գծագրեր, բացատրագրեր յուրաքանչյուր մասի համար, հատակագծեր, ինժեներական ենթակառուցվածքների գծագրեր, պրոֆիլներ, կտրվածքներ, շին. աշխատանքների կատարման մասնագրեր, հանգուցներ, տեխնիկական մասնագրեր, ըստ նախագծի իրականացվող աշխատանքների մանրամասն ծավալներ:

Այլ պահանջներ.

ՀՀ օրենսդրությամբ նախատեսված նախագծնախահաշվային փաստաթղթերի փորձաքննությունը կկատարվի նախագծողի կողմից:
Նախագծի հեղինակային հավորության աշխատանքները կվճարվեն առանձին պայմանագրով:
Նախագիծը ներկայացնել 5 օրինակից, հայերեն և ռուսերեն լեզուներով, միաժամանակ էլեկտրոնային կրիչով:
Նախահաշիվը և ծավալաթերթը ներկայացնել 2 թղթային օրինակից, միաժամանակ էլեկտրոնային «Excel» տարբերակով:
Այլ փաստաթղթեր՝ շինարարական աշխատանքներ կատարելու համար պահանջվող **լիցենզիաներ**, աշխատանքային ռեսուրսներ, տեխնիկական միջոցներ, շինարարության (կապակի) օբյեկտի, դրա առանձին մասերի (կոնստրուկցիաներ և այլն) և օգտագործված նյութերի երաշխիքային ծավալներ:

Պ Ա Տ Վ Ի Դ Ա Ս Ա Ի

ՀՀ, ք. Երևան, Կոթք, Հովսեփյան 95
Ամերիկաբանկ ՓԲԸ

հ/հ 1570027609970100
հ/հ 15701501898



Կ Ա Տ Ա Դ Ա Ղ

ք. Երևան, Մանիկյան 27, բն. 126
Ակբա-Կրեդիտ-ագրիկոլ բանկ ՓԲԸ

հ/հ 220453330684000
ՀՎՀՀ 00147538



ԳԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

Ծառայություն

Գ/Հ	գնումների պլանով նախատեսված սկզբնական ծածկագրի քառ ԳՄԱ ըստ սպասարկման (ԸՄ)	անվանում	միևնույն կնքումների նախատեսվում է իրականացնել 2019թ-ին՝ ըստ ստիմուլի, այդ թվում, հազ. դրամ										Ընդամենը			
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր		նոյեմբեր	դեկտեմբեր	
4	71241200	Երևանի հայրերից կենտրոնի վարչական հատված տեխնիկական մասնաշենքի տեխնոլոգիական և վարչական հատվածների վերանորոգման աշխատանքների նախագծանախաձեռնարկի փաստաթղթերի կազմման և ծախսերի գնահատման ծառայության ձեռքբերում՝ փորձաքննությամբ	0	0	0	0	0	0	0	0	0	0	1 098.0	1 098.0	1 098.0	1 098.0

*Վարման եղանակ գումարները ներկայացվում են աճողական կարգով:

Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ ՈՒ

ՀՀ, ք. Երևան, Լորք. Հովսեփյան 95
 Ամբիաբանի ՓԲԸ
 հ/հ 1570027609970100
 ՀՎՀՀ 01501898



Կ Ա Տ Ա Ր Ո Ղ

ք. Երևան, Մամիկոնյանց 27, բն. 126
 Ակբա-Կրեդիտ-ագրիկոլ բանկի ՓԲԸ
 հ/հ 220453330684000
 ՀՎՀՀ 00147538



/ստորագրություն/

Կ.Տ.